


Handwritten notes in Armenian script, including a signature and the date '1952'.

Board Of Trustees
ST. GREGORY ILLUMINATOR
CHURCH OF ARMENIA
Main Street
Haverhill, Mass.



ՀՈԳԱԿԱՐՁՈՒԹԻՒՆ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ ՀԵՅՎՐԶԻԼԻ

15 Մարտ , 1952

Հոգ.

Տ. Թոնգոմ վարդ. Մանուկեան,
Փոխանորդ Առաջնորդին Հայոց Ամերիկայի,
Եւ Նախագահ Պատ. Կեդր. վարչութեան

Նիւ Եորք

Հողեշնորհ Հայր-Սուրբ,

Որպէս գործադրիչ մարմին Կեդր. վարչութեանը իջրաջանչիւր անդամի պարտականութիւնն է կանոններու գործադրման նախանձախնդիր ըլլալ առանց վերապահութեան:

Արդ, նկատի ունենալով որ, առ-Հողեւորականաց Հիմնադրամի կանոնին հաստատումէն ի վեր զանառուներ կան. բացարձակէն քան վարչութեան քննութեան ենթակայ է. այսու հանց կ'ընեմութեմիս մէջ պաշտօնավարող բոլոր եկեղեցականները կ'ենթարկուին այդ կանոնին թէ ոչ: Եթէ ոչ ինչո՞ւ պաշտօն կը վարենք կարելի է այս պարագան կանոնով արդարացնել: Եթէ առարկուի թէ անոնք առժամեայ կը պաշտօնավարեն. կ'ուզէի հասկնալ թէ ժամանակի չափերով ինչ կը նշանակէ առժամեայ շաբաթ մը, ամիս մը, տարի մը թէ դար մը: Եթէ առարկուի թէ անոնք թեմիս եկեղեցան չեն, պիտի երթան: Կ'ուզէի գիտալ թէ ինչո՞ւ կը պաշտօնավարեն, եւ թէ որ եկեղեցականը օգտակար թեմիս մէջ պիտի մնայ:

Խնդիրը սեղան կը բերեմ ոչ միայն, անոր համար որ, վարչութեան անդամ եմ եւ զանառուներէն մին, այլ անոր համար որ կանոնի կիսատ գործադրման մէջ անիրաւութիւն կը տեսնեմ թէ ներկայի եւ թէ ապագայի համար: Նախընթացները իրաւունք կ'ընան տալ ուրիշ մէկուն ապագային անոնց օրինակին հետեւիլ. երբ ոչ որ իրաւունք կ'ընայ ունենալ այդպիսին դատարարութեւ: Բացառութիւնները կանոնով յիշուածներն են, այլապէս թեմիս մէջ պաշտօնավարողները պէտք է կանոնին հպատակին: Ամէն եկեղեցական շատ դիւրաւ կ'ընայ պատճառանքներ գրանել իր բացառութեան համար:

Արդ, Կեդր. վարչութիւնը պէտք է պահանջէ, որ բոլոր եկեղեցականները հնազանդին կանոնին՝ սկսեալ անոր գործադրման տարիէն:

Մնամ խոնարհաբար Ազ. Թակից
Հմայեալ վարդապետ

Հասցե

Մարտ 2, 1953

Հոգեշնորհ
Տ. Հրանդ Աբղ. Խաչատուրեան
Նստազահ Հոգաբարձութեան
Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Հէյվըրհիւ, Մէսս.:

Հոգ. հայր սուրբ.

Ստացուած է անթուակիր Զեր գրութիւնը որով կը տեղեկացնէիք
թէ Զեր նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ հոգաբարձական
մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ընտրութեան արդիւնքը
կը խնդրէիք վաճառքման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտ-
րուած են եւ ընտրողներու մեծ մասին վստահութիւնը կը վայելեն
իբրեւ եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր եւ պարտաճանաչ անդամ-
ներ, կը վաճառքները անոնց ընտրութիւնը ըստ յիշեալին.-

Տիարք Կարապետ Սրապեան վերընտրեալ
Սեդրակ Յովհաննէսեան վերընտրեալ
Հրանդ Զահրէճեան վերընտրեալ
Լեւոն Գաթապեան նորընտիր
Խաչատուր Լուսոյեան նորընտիր

Կ'օրհնենք նորընտիր հոգաբարձուները եւ վստահ ենք որ
անոնք իրենց ջանքերը միացնելով պաշտօնի վրայ անպակաս
ուճախատանքներու պիտի զործեն Աստուծոյ փառքին եւ մեր սուրբ
եկեղեցւոյն պայծառութեան համար: Մաղթելով կարողութիւն եւ յա-
ջողութիւն ի Տեառնէ,

Մնամք Ձերմ սիրոյ ողջունիւ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Քի. 1252
Նոյեմբեր 19, 1956

Հագեշնորհ
Տ. Հրանդ Արեգայ Խաչատրեան
Նախագահ Միակամ Խորհուրդի
Ս. Գրիգոր Լուսուրբի Եկեղեցւոյ
Հէյվըքհիլ.
Սիրելի Հայր Հրանդ.

Այսու կաւ գանձ անգամ մը եւս շեշտել, թէ մեր թեմի կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, թեմին մէջ գտնուող բոլոր եկեղեցական կալուածներու սեպհականաթուղթերը պէտք է փոխանցուին եւ արձանագրուին Առաջնորդարանիս անունին: Արդէն մեր ծուխերէն կարելոր մասը իրենց եկեղեցական կալուածներու սեպհականաթուղթերը փոխանցած են Առաջնորդարանիս, մնացեալ ծուխերու կարգին ձեր ծուխն ալ հարկ է որ առաջին առթիւ լրացնէ փոխանցման գործողութիւնը:

Մեր թեմական Պատգամաւորական ժողովները կրկնակի անգամ ըզբաղած են այս օրէնքի գործադրութեան հրատապ հարցով եւ յանձնարարուած է մեզի եւ թեմական Խորհուրդին, հետամուտ ըլլալ որպէսզի կալուածներու փոխանցման վերաբերեալ կանոնադրութեան տրամադրութիւնը անյապաղ գործադրուի մեր բոլոր համայնքներուն կողմէ:

Անհրաժեշտ կը համարինք յիշեցնել որ թեմի կանոնադրութեան յօդուածները—18 /բ/, 67 /իա/, 67 /իդ/, 73, 79, 99, 100, 101 եւ 105— կը միտին պաշտպանել եւ թոյլ չտալ որ կալուածները ոեւէ սխալմունքներու եւ վէճերու պատճառաւ անհարկիօրէն գրաւի դրուին կամ ձեռքէ հանուին կամ ոեւէ ձեւով վաճառուին: Ծուխերուն պատկանող շէնքերը Առաջնորդարանիս փոխանցուելով հանդերձ իւրաքանչիւր ծուխ կը պահէ իր օրինական իրաւունքը շէնքերուն վրայ եւ առանց Միակամ Ժողովի որոշումին չի կրնար կարգադրութիւններ ընել կալուածոց մասին:

Պրն. Վինսընդ Եարտըմ, որ կը զբաղի եկեղեցական կալուածոց սեպհականաթուղթերը Առաջնորդարանիս անունին փոխանցման գործով, կարող է ձեզի խորհուրդ տալ կալուածոց փոխանցման գործողութիւնը ինչպէս կատարելու մասին: Հաճեցէք յարաբերութեան մէջ մտնել Պրն. Եարտըմի հետ, որուն հասցէն կերելի ստորեւ: Կուզենք յայտնել թէ կալուածոց փոխանցման համար ըլլալիք իրաւական ծախքերը պիտի հոգայ Առաջնորդարանս:

Mr. Vincent Yardum
41 East 42nd St.
New York, N.Y.

Մնամ սիրոյ ողջունիւ
Աղօթարար
Արամ Բարսեղյան
ՄԱՄԱՐԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Հոգեշնորհ
Տ. Հրանդ Աբեղայ Խաչատուրեան
Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Հէյվըրհիւ.

Միտելի Հայր Հրանդ.

Առաջնորդ Սրբազան Հօր յանձնարարութեամբ այսու կը յայտնենք թէ ստացուած Պատուարժան Միական Խորհուրդի Գանձապահ Պրն. Սեդրակ Ս. Օհաննանի ամսոյս 4 թուակիր նամակը, որով կը տեղեկացնէր թէ 1955 տարեշրջանի համար իբրեւ ծխական տուրք եւ Ս. Եջմիածնի լուսնայի համար Առաջնորդարանս առաքած 300 տուարի փոխգիրք, որ կը կրէ եղեր 2149 թիւը, գանձուած եւ կտորնը ետ դրկուած է:

Կրկին անգամ մայր տոմարը քննելով ստուգեցինք որ 1955, Սեպտ. 13 թուականաւ 300 տուար արձանագրուած է ի հաշիւ Ուստրի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ, որուն դրկուած է 8994 թիւ ընկալագիրք: Մինչդեռ Ուստրի Միական Խորհուրդը այդ թուականաւ դրկած է միայն 148 տուարի փոխգիր մը որ արձանագրուած եւ ընկալագիր դրկուած է: Կը թուի թէ Ձեր առաքած 300 տուարը սխալմամբ արձանագրուած է ի հաշիւ Ուստրին, որուն Միական Խորհուրդին կը դիմենք այսօր խնդրելով Առաջնորդարանին հայթայթեն 1955 տարեշրջանին իրենց առաքած գումարներուն լրիւ ցանկը, որպէսզի կարենանք վերջնական ճշդմամբ կատարելով Ձերի հաղորդել ինչ որ հարկ է:

Ձեր նոյն նախնիով այսօր ստացանք նաեւ 36 տուարի փոխգիր մը, 30 տուար ի հաշիւ պատի օրացոյցներուն եւ 6 տուար ալ ի հաշիւ գրպանի օրացոյցներուն:

Իսկ Ձեր նամակին ի պատասխան այսօր առանձին պահարանով Ձերի, ինչպէս նաեւ թեմի ընդ որ ծուխներուն, դրկեցինք ծխական տեղեկագիրներու զոյգ օրինակները, մէկը ձեր թղթածրարներուն համար, իսկ միւսը լեցնելով Առաջնորդարան վերադարձնելու համար:

Շատ կը ցաւինք որ Ձերի եւ Պատուարժան Միական Խորհուրդի աւելորդ ձանձրութիւն պատճառեցինք տոմարին մէջ արձանագրելու ատեն այդ սխալը գործելով: Կրնաք վստահ ըլլալ որ գրասենեակին մէջ այս սխալները յաճախ չեն պատահիր եւ պատահելու պարագային ալ ոչ դիտաւորութիւն կրնայ ըլլալ:

Մնամ խորին յարգանօք՝

Սուրէն Մանուէլեան
Դիւանագիր

Թիւ 1785
Ապրիլ 29, 1957

Պատուարժան
Միսկան Խորհուրդ
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Հէյվըրհիլ.

Ազնիւ սիրելիք մեր,

Այսու կու գանք յայտնել թէ թեմիս Դպրաց Դասի
Միութեան ամառնային Սեմինարը այս տարի տեղի պիտի ունենայ
Յունիս 22ին, Սիւվըր Պէյ. Նիւ Եորք:

Տրուած ըլլալով որ Ձեր հոգեւոր հովիւ Հոգեշը-
նորհ Տ. Հրանդ Արեղայ Խաչատուրեան յիշեալ Սեմինարին դաս-
խօսներէն մին նշանակուած է, կը յանձնարարենք որ զինք արտօ-
նէք որպէսզի կարենայ իր պարտականութիւնը կատարել:

Երայոյս ըլլալով որ պատուարժան Միսկան Խորհուրդը
սիրով մեզի պիտի գործակցի, կը յայտնենք մեր հայրական օրհնու-
թիւնը եւ կը մաղթենք Ձեզի կարողութիւն եւ յաջողութիւն:

Մնամք սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Ամերիկայի Հայոց

վրտիվմ գրող Յսմուշ Եմսուշտար
ՈՍՍՍԿ ՈՎՍՁԺՅՈՒ ԳՅԵՈՒՈ

Սոմոթլոնդ
ԳՎՂ ԲՍՇՆՍ ԲՍՄՎՈ ՏՐՈՂՈՂ

Օմտրոյ ղտգլայսմոմոմ ԳԳ ղտգլ

- ԲստոՂ Գճճճ ղ Բսմճճ ղտնղտ նվնմ Բսչմսլ ղտհտղճ ղտքմտ Բստոճ ԲԳ ղճճ
Տճճ ղլոնտի ԲԳ ղ Բվլայսնսճոմ Բսճմսն մճճ ղ շճոնճնճիճ Տճճ ղլոնտ մի
ղվնղտչոմչ Բհոմ մճճ Տճճ ղտտնղմ վտվո իսմվո մս իսլոլլմ շտտոչ
ճճ վոլ Բսճ մճճ վլոլիսլ Բճնտրոմտ մր ղտհոնճնճիճ Տճճ ղտնսմտի մս
ԲԳ ղվոլ Բտրո մի Բսմոն վ մլ Բվլայսմնտնմտի Բոմ մճճ

Օճճի Բս վմտո շմ Բսճ ղվոլ Բսճ վոլ Գճմսլ Տվլլոնճոմի ճճո

- Չճ վ • իսմճճ ղտրոմո ղոմ • ղտգլ Բսմոմտիտտո ղ Բսճճսչ վճճ Բոմոյ վլոլի
- սլ Բճնտրոմտ Տճճ ղմտի մր վիտմվի շճո ղտ Բստոճ վնճոմս Բոլլլմ մր
Բ Բվլայսմնտնմտի Գոչճմոճ ճոնսի նվնմ Բսչմսլ ղտհտղճ ղտքմտ Բստոճ ԲԳ
մճճ մս Տճճ ղմոմոլ Գճոմ մի • վ Բվլիսլ Յճոտո Բոմո վտվո մտրոյ մր վի
- տոտրոք ղվնճնճիճ մճճ վլոլիսլ մս իսլոլլմ ճոսմճ

Օմլոտճոմ ղտհոսիսլ Բսճնճիճ Չվմստո Բսլ մսնվմ

• Ո Բսլճճ ղտտո Տմսճ Բվլ Բսմնոլսի մի ղվճճ Բվոմո Բոսմտ
ղտճճոմ • Բոչճ ղվմո • Տ շմսճոտրոմո Բվիսլ Բսճնճիճ Յճո
- տնմոլ ԲսմմՈ վլոլիսլ ճլ Բճոլոմո Տճճոն Բսի Բոմո

• նոմոլ մոմո վլոլվո

• Բվլլլլլլլլլ

Բսճնճիճ Չվմստո Բսլ մսնվմ • Ո
վնմ Բսչմսլ ղտհտղճ շոնոլո
ղտճմ Բստոճոմ Բոնճոմ նոմոլ • Տ
շմսճոնսլ

ՍԿՐԻՒ 15, 1957
ՔԻՒ 1734

ՅՄՐԱԿ ԿՐԹԻՎՈՒԹՅԱՆ ԻՄՍՏՐԱԿՏ
ՈՍԽԱԿ ՈՎՆԱԳՅՈՒՄ ԳՅՈՒՄՈՒՄ

ՍՏՈՒՄՆԵՐ
ԲԱՐՈՒՄՆԵՐ ԲՆԱԿՈՒՄ ԺՅՈՒՄՈՒՄ

• Բարձրագույնագույն ճանապարհով մտնելով
- զից իսկզբից իսկ Բարձրագույնագույն վերին ճանապարհով

• Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
- Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով

• Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով

• Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով

• Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով

• Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով

• Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով
Երկրորդ Բարձրագույնագույն ճանապարհով

1957 թ. 30
1786 թ. 1

Թիւ 2015
Յուլիս 14, 1957

Ազնուաւիայի
Տիկին Գոհարիկ Սովսէսեան
Ատենապետ Եկեղեցասէր Տիկնանց Միութեան
Ս. Գրիգոր Լուս. Եկեղեցւոյ
Հէյվըրհիլ.

Սիրելի Տիկին Սովսէսեան,

Մտորհակալութեամբ ստացած ենք ամսոյս 10 թուակիր
Ձեր նամակը, ներփակեալ 743.25 տուարի փոխդրով: Կը տեղեկացնէք
թէ սոյն գումարը գումար հասոյթն է նիւ Ինկլէնտի մեր եկեղեցինե-
րու եօթը Եկեղեցասէր Տիկնանց Միութեանց 1957 Յուլիս 2ին, մի-
ասնաբար յօգուտ Առաջնորդարանիս սարքած դաշտահանդէսին:

Խորապէս կը զնահատենք Ձեր եւ օժանդակ քոյր Մի-
ութեանց համազօրծակցութեան ոգին որ այս տեսակ առիթներով, շատ
զեղեցիկ կերպով կը յայտնաբերէք Առաջնորդարանի կարիքները բառնա-
լու համար:

Կը հայցենք ի Տեառնէ պարգեւելու Միութեանց բո-
լոր անդամներուն երկար կեանք ու բարօրութիւն, որպէսզի, ի գո-
հունակութիւն Ձեզի, կարենաք միշտ ալ արդիւնաւոր ընծայել եկե-
ղեցւոյս պայծառութեան համար ի սպաս դրած Ձեր աշխատանքները:

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ
Աղօթաբար

ՄԱՄԱՐԷ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Ամերիկայի Հայոց

Թիւ 3549
Յուլիս 30, 1958

Հողեշնորհ

Տ. Մեսրոպ Վրդ. Սէմէրճեան

Հողեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ եւ
Նախագահ Եկեղեցասէր Տիկնանց Միութեան
Հէյվըրհիւ.

Սիրելի Հայր Մեսրոպ եւ Յարգելի Տիկիններ,

Այսու կու գանք յայտնել Ձեր սիրելիութեանց թէ Արժանաշը-
նորհ Տ. Բարդէն ԶՀնյ. Մագսուտեան անձամբ մեզի յանձնեց 1.485.12
տոլարի գումար մը, որ իբր զուտ հասոյթ գոյացած էր նիւ Ինկլէնտի մեք
եօթը եկեղեցիներու Եկեղեցասէր Տիկնանց Միութեանց միացեալ ջանքերով
սարքուած զաշտահանդէսի ձեռնարկէն: Սոյն գումարը, ըստ Ձեր առաջադ-
րութեան եւ փափաքին, պիտի յատկացուի Ս. Էջմախիմնի Մայր Աթոռի Համար
Ազգիս Վեհափառ Հայրապետի կողմէ ապսպրուած ապրանքներու գնման եւ առ
այդ պիտի գրենք նորին Ս. Օծութեան:

Խորապէս գնահատելի է Ս. Էջմախիմնի Մայր Աթոռին եւ անոր
ազգընտիր Գահակալ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Հանդէպ ցոյց
տուած Ձեր որդիական սէրն ու հաւատարմութիւնը զոր անգամ մը եւս
գիտցաք հաւաքաբար արտայայտել վերոյիշեալ ձեռնարկին առթիւ: Կը շը-
նորհաւորենք ամէնքդ եւ եկեղեցւոյդ պաշտօնէութիւն ու ծխականները,
բոլորիդ զոհաբերութեամբը արդիւնաւոր ընծայուած գործին համար:

Կօրհնենք ամէնքդ եւ կը մաղթենք բոլորիդ արեւիստութիւն
եւ քարօրութիւն, կարենալ շարունակելու Ձեր նուիրեալ ծառայութիւնը
ազգային կեանքի պահպանման եւ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեց-
ւոյ պայծառութեան համար:

Մնամք Հայրական սիրոյ ողջուելու
Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 3011
Նոյեմբեր 14, 1957

Պատուարժան
Մխական Խորհուրդ
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Հէյվըրհիւ.

Ազնիւ սիրելիք մեր.

Ձեր Նոյեմբեր 10 թուակիր նամակը, որով կը խնդրէիք որ
Հոգեշնորհ Տ. Հրանդ Աբգ. Խաչատուրեան մնաց Ձեզի հետ մինչեւ 1957
Գեկտեմբեր 1ի կիրակին, յանձնեցինք Թեմական Խորհուրդի ուշադրութեան:

Թեմական Խորհուրդը, տուեալ պայմաններու մէջ, կը խորհր-
հի թէ իմաստութիւն պիտի ըլլայ որ Եկեղեցւոյդ համար նշանակուի նոր
հովիւ մը, որպէսզի կարենայ կանոնաւոր ընթացք տալ Եռեսիդ հոգեւոր
եւ վարչական գործերուն:

Հերեւաքաց այսու կու գանք յայտնել պատուարժան Մխա-
կան Խորհուրդիդ, թէ կարգադրած ենք որ Հոգեշնորհ Տ. Մեսրոպ Վրդ.
Սէմէրճեան առժամեայ կերպով ստանձնէ Եկեղեցւոյդ հովուական պաշտո-
նը մինչեւ ցնոր տնօրինութիւն:

Հայր Մեսրոպ պիտի ստանձնէ Եռեսիդ հոգեւոր Հովիւի
պաշտօնը 1957 Նոյեմբեր 17էն սկսեալ: Ուրեմն կը յանձնարարենք Ձեզի
որ ամէն աշակցութիւն ընծայէք Հայր Սուրբին, եւ նաեւ շանագ պահել
Եռեսիդ անդորրութիւնը:

Հաղորդելով զայս առ ի գիտութիւն, եւ մաղթելով Եկե-
ղեցաշէն Ձեր գործոց յաջողութիւն.

Մնամք սիրոյ ողջունիւ
Ազօթարաց

ՎԱՐԴԱՆ ԲԷՆՅ. ՄԿՐԵԱՆ
Առաջնորդական Փոխանորդ

Թիւ 1534
Սեպտեմբեր 14, 1960.

Հոգեշնորհ
Տ. Մեսրոպ Վրդ. Սէմէրենան,
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ եւ
Նախազահ Պատուարժան Միսկան Խորհուրդի,
Հէյլըքհէ.

Սիրելի Հայր Մեսրոպ,

Մայր Տաճարի Հանգանակիչ Յանձնախումբը, յօգուտ Մայր Տաճարի
շինութեան, վիճակահանութեան ձեռնարկ մը կազմակերպած է յառաջիկայ
Դեկտեմբերին Համար:

Ընդառաջ երթալով Մայր Տաճարի Հանգանակիչ Յանձնախումբի կողմէ
մեզի եղած խնդրանքին, Լեւոն Սրկ. Հէրիմեանի պաշտօն յանձնած ենք որպէս
զի այցելէ նիւ Ինկլէնտի մեր Համայնքները եւ Հոգեւոր Հովիւներու, Թխա-
կան Խորհուրդներու եւ ենթակայ մարմիններու զործակցութեամբ այս վիճակա-
հանութեան տոմսակները Ժախելու աշխատանք կատարէ:

Այսու կը հրահանգենք Ձեզի եւ Պատուարժան Միսկան Խորհուրդի
որպէս զի ենթակայ մարմիններուն եւ Հայր. Եկեղեցւոյ Երիտասարդաց կազ-
մակերպութեան մասնահիւղիդ Վարչութեան հետ միասին ամէն աշակցութիւն ըն-
ծայէք Լեւոն Սարկաւազին, յաշողութեամբ պսակելու Համար վիճակահանութեան
այս յոյժ կարեւոր գործը:

Լեւոն Սարկաւազ Ձեր Համայնքին պիտի այցելէ Ձորեթշաբթի, Հոկտեմ-
բեր 5, 1960, երեկոյեան ժամը 8-ին:

Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթաբար

ՍԻՈՆ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 1463
Օգոստոս 10, 1960

Հոգեշնորհ
Տ. Մեսրոպ Վրդ. Սէմէրճեան
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
եւ Նախագահ Միական Խորհուրդի
Հէյվըրհիւ.

Սիրելի Հայր Սուրբ,

Առաջնորդ Սրբազան Հօր հրահանգով այսու Ձեզի եւ պատուարժան
Միական Խորհուրդիդ կը յիշեցնենք, թէ Առաջնորդարանի 50.000 տոլարի
հանգանակութեան արշաւին առթիւ ձեր ծուխին 500.00 տոլարի զօթա սա-
մանուած էր:

Ձեզի ղրկուած ժամանակացոյցին վրայ ձեր ծուխին հանգանակու-
թեան ձեռնարկի օր նշանակուած էր Յուլիս 17 եւ յանձնարարուած էր որ
ընթացք տայիք գործին եւ արդիւնքը հաղորդէիք Առաջնորդարան:

Այս մասին ցարդ ձեզմէ իմացած չըլլալով՝ յանձնարարուած ենք
խնդրելու ձեզմէ որ մէկ շաբաթուան ընթացքին Առաջնորդարան գրէք ձեր
հանգանակութեան ձեռնարկի նոր թուականի մասին, որպէս զի մեր պատրաս-
տելիք նոր ժամանակացոյցին վրայ նշանակենք:

Առաջնորդ Սրբազանի հրահանգն է որ մինչեւ Հոկտեմբերի կիսուն
տեղի ունենայ ձեր ծուխին հանգանակութեան ձեռնարկը, ուրեքն, հանեցէք
կարեւորութեամբ նկատի առնել այս պարագան եւ ընթացք տալ գործին:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով.

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ Առաջնորդարանի

Թիւ 1998
Մարտ 20, 1961

Հոգեշնորհ
Տ. Մեսրոպ Վրդ. Սէմէրճեան
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միական Խորհուրդի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Հէյվըրհիւ.

Սիրելի Հայր Սուրբ.

Ստացած ենք 1961, Մարտ 15 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ Ձեր Նախագահութեամբ՝ Փետրուար 23ին գումարուած
Միական Ժողովը կատարած է Միական Խորհուրդի մասնակի ընտրութիւն,
եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած
անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական Ժողովը տեղի ունեցած է
Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած
անձերը, իբրեւ Եկեղեցւոյ Նախանձախնդիր եւ Նուիրեալ անդամներ,
կը վայելեն Ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը
վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին. —

Տիարք՝ Ետուրտ Տէր Պօղոսեան
Պօղոս Դաւիթեան
Հրանդ Զահրէճեան
Ուոլթըր Բաշիկեան
Խաչատուր Լուսոյեան

Օրհնելով նորընտիր անդամները՝ կը մաղթենք Ձեզի եւ պատ-
ուարժան Միական Խորհուրդիդ յաջող եւ արդիւնաւոր գործունէութիւն,
ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի շինութիւն համայնքիդ մեր սի-
րեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրուանդ սիրոյ ողջունիւ
Ազօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊՈՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN APOSTOLIC CHURCH

MAIN STREET
HAVERHILL, MASSACHUSETTS

DRake 4-9778

Դեկտեմբեր 14, 1961
Հէյվըհիլ.

Գերաշնորհ
Տ. Սիոն Ս. Արքեպս. Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Ամերիկահայութեան
Նիւ Եօրք.

Գեր. Տ. Սիոն Սրբազան Հայր,

Յանուն Հէյվըհիլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Հոգաբարձու-
թեան եւ հաւատացեալ ժողովուրդին կը դիմենք Ձերդ Սրբազնութեան մեր
ապագայ հոգեւոր հովիւի խնդրով:

Մեր գաղութը արդէն պատրաստած է ճանապարհածախսը եւ կահաւորուած
տուն մը եւ Լիւսայոյս կը սպասէ իր նոր հոգեւոր հովիւին, կաղաչենք որ
Ձեր կարելին ի գիրծ դնէք մեր ժողովուրդը յուսախաբ չընելու համար:
Գիտենք թէ դժուարութիւններ կան, բայց ապահով ենք որ Ձերդ Սրբազնու-
թիւնը պիտի յաղթահարէ այդ դժուարութիւնները: Եւ մեր գաղութը օժտէ իր
նոր հոգեւոր հովիւով:

Յաճախ կի մեր խնդրանքը կը շեշտենք, որովհետեւ առանց մնայուն
հոգեւոր հովիւի մեր ճիգերը կը մնան ապարդիւն, եւ մեք ազգային- եկեղե-
ցական կեանքը ամլութեան կը դատապարտուի:

Համբուրելով Սրբազնութեանդ Ս. Աջը

Ի դիմաց Հէյվըհիլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ
Հոգաբարձութեան

Ատե նաղպիր

Երեսփոխան

Ատե նապետ

Գրաւորութիւն

Վրտիվմագրո Յս Լոյ ԵմսղՅոսո
ՈՍՍԿՈՎԱՆՍԿՈՂՆԵՐ

Մամուլի
Ի վրայն Բամվո Կարամվո Երոզո

Իտղմզմզո մզո Եվմոլոթոյ ղրվմայզմզ մ ղր Բարեզնզիզ օր ղրվմայսոթ
-Բոն մ օրվմայսզրայսթմն մարողվմմ ղր Եսզոմ ղրամզոթնզո ղոթմայս
-տոն ղր վնզո Երզղնոթ մի օրնեի վնմայսմսո ղոհոմոն իսլզոմո

Եմզոզնոթ-ղրսոթ մրնեի մրոմն մսղ վնմայս
-մսո ղոհոմոն ղոթո ղրնեմ մ Եսզնզրայսնոյ ղր մմզմոհզնզո վնմայսմսո ղոհ
-տոն Եզնմն ղոթմնմսղՅոսո իսղմսո ղվՅոսո մս Երզմոմոթրզոմ մի

ղոթոմնո ղոհզնզ
ղոթոմնո ղոհոթ
ղոթմնմմզ ղոհմայս
ղոթոզոթիսն Յմոթո ժմմզ

Սղսոթ Երզղնոթմզոթի մի րսոմ օրվմայսմսոթի ղվնմայսնսթ մզոլոթոյ
մզո ղոլզոմի մի օրզոթնզո Իտղմզմզ ղր Յոթոյտոմնն Երոզնզնզիզ ղոմմզ
օրզոթո ղոսմոթոմ ղր օրոթոթոյ մրողմայսմնոթոմն ղոթոլայսմնոթոթոյ ղոհոթ
-զո մ ղոթոզոյս վնզո միսնսթ ղոհոմոն մզո մս իսլոզոզոյս մտոի

Եմվնոթոնն ղոթոթոթոթի
ղրամզոթո ղոսմոթոմ Եզմնզոլ մի օրվմայսմսո ղոթոլայսիմոթրայս մ իսլզոմոմոհ
-մզո ղր օրվմայսմսո միտոթո վնմայսմսո ղոհոմոն մ ղոթոթոթի միսնսթ
ղոհոմոն Եվմոլոթոյ ղոսմոթոթոյսն ղվՅ մոսոլայս ՅՅՅ մրողմայստոմոլ
-տո մզո ղոլ մզնմսնոյ մի իսմս օրվմայսիզնզո մզո մրզ ղոթոթո

Օրնմոյ մզո վնզմզ

Բարեզնզիզ օրսոյ օրն օր վնզմմիթր
վնմայսմսո ղոհոմոն ղոհոմոն ղր ղվիս ղսլզոմո
ղոթոթոթո օրն ղոթոթոթո օր
ղմսղՅոթոթո

ՅՅՅ ԵՅ ԵՅ
ՅՅՅ ԵՅ

Թիւ 4111
Մարտ 21, 1962

Հոգեշնորհ
Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան
Քէմպըրիճ.

Սիրելի Հայր Թորգոմ,

Ինչպէս տեղեակ էք, Հէյվըրհիլի մեր համայնքը, անցեալ
Սեպտեմբերէն ի վեր, մնայուն հովիւ չունի, եւ հազիւ ամիսը
մէկ կամ երկու անգամ Ս. Պատարագի եւ կենաց բանին քարոցու-
թեան միտարութիւնը կը վայելէ:

Աւագ շաբթու եւ Զատիկի տօնին առթիւ, ինչպէս միւս ան-
հովիւ համայնքները, նոյնպէս Հէյվըրհիլի համայնքը չզրկելու
տօնական օրերու արարողութիւններէն, մասնաւոր կարգադրութիւն-
ներ եղած են Առաջնորդարանի կողմէ:

Հէյվըրհիլի Ծիական Խորհուրդը մասնաւոր խնդրանք ներ-
կայացուցած է մեզի, որպէս զի կարգադրութիւն ըլլայ որ դուք
այցելէք իրենց Աւագ շաբթու ընթացքին՝ կատարելու համար արա-
րողութիւնները եւ Ս. Զատիկի կիրակին Ս. Պատարագի մատուցանելով
եւ կենաց բանին քարոզախօսութեամբ միտարէք այս անհովիւ ծուխը:

Պատահ են թէ անհրաժեշտ կարգադրութիւնները կ'ընէք, որ-
պէս զի Աւագ շաբթուն արարողութիւնները կատարուին ըստ պատշաճի:

Մաղթելով Ձեզի Աստուծոյ օգնականութիւնը եւ յաջողութիւն.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթաքից

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Քիւ 12815
Փետրուար 28, 1966

Արժանաշնորհ
Տ. Վարդան Քյնյ. Տ. Ասատուրեան
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Նկեղեցւոյ
Եւ Նախագահ Պատուարժան Ժիական Խորհուրդի
Հէյվըրհիւ.

Սիրելի Տէր Վարդան,

Սասցած ենք Ձեր 1966 Փետրուար 21 թուակիր տեղեկագիրը, որով
կը տեղեկացնէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 18ին զումարուած
Ձեր Տարեկան Ժիական Ժողովին Մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի
մասնակի ընտրութիւնը եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը
խնդրէիք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Փեմական Կա-
նոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած
է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները իբրեւ անդամ
Ժիական Խորհուրդի.

Տիարը՝ Սայմն Համալեան
Նդուարդ Տ. Գօոսեան
Հարլզ Քաշմեան

Կը յանձնարարենք որ Ձեր Ժիական Խորհուրդի նոր դիւանի անուն
--հասցէները Առաջնորդարան ղրկէք փութով:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ
Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի
մը, ի պայծառութիւն Ս. Նկեղեցւոյդ եւ ի շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵԳԻՍԿՈՎՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Եւ Կանադայի

ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN APOSTOLIC CHURCH

MAIN STREET
HAVERHILL, MASSACHUSETTS

DRake 4-9778

Handwritten signature
Աբրահամ

Մարտ 21, 1966

Բարձրաշնորհ,
Տ Սիոն Արք Եպիսկոպոս Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ Գանատայի
Նիւ-Եորք

Սերեւի Սրբազան Հայր,

Այսու ուղարկութեամբ կը հաղորդենք թէ եկեղեցւոյս քովի հողը գնած ենք 5000․00 տոլարի եւ մտադիր ենք վրան շէնք մը կառուցանել եւ վարձու տալ Հեռաձայնի լնկերութեան: Առ այս նախնական աշխատանքները յառաջ կը տարուին:

Մասնաւոր Եխական Ժողովի մը մէջ մեր ծխականներուն հաւանութիւնը առնելէ ետք կը սկսինք շինութեան գործին եթէ ամէն բան լաւ ընթանայ:

Կը յուսանք մեր առած քայլը օրինական է եւ չհակասէր Կանոնադրութեան: Եթէ անտեսուած կէտեր կան, բարի եղէք մեր ուշադրութեան յանձնել:

Մնամ որդեիական ակնածանօք եւ մատչելով ի համբոյր Ձեր Ս Աջոյն,

Handwritten signature
Վարդան ԲՏՆՅ՝Տ Ասատուրեան
Հոգեւոր հովիւ

DEMOCRACY BOND

Թիւ 16028
Յունուար 30, 1967

Արժանացնուի՛
Տ. Կարգան ԲԳՆԿ. Տ. Ասատուրեան
Հոգեւոր Հովիւ Ա. Գրիգոր Լուս. Եկեղեցւոյ
և Լոյսազատ Միակեան Խորհուրդի
Հէյվերհիւ.

Սիրելի Տէր Կարգան,

Ստացան ենք 1967 Յունուար 24 թուակիր ձեր անդեկագիրը, որով կը
հաղորդէք թէ Ձեր 'Լոյսազատութեամբ' Յունուար 22ին դումարուած Տէր Միա-
կան ժողովին մէջ կատարուած է Միակեան Խորհուրդի չորս անդամոց ընտրու-
թիւնը, եւ ներկայացնելով ցուեարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած
անձերուն վստահեցանք զաշտօնագիրը:

Նկատի ունենալով զը Ձեր ժողովը տեղի ունեցան է Թմմական 'Կանոնադ-
րութեան արամադրութեան համաձայն, այսու կը վստահեցնենք Միակեան Խոր-
հուրդի 'նորընտիր անդամները, ըստ ստուգելու արուած ցասելին:

Այս առիթով կը յայտնենք թէ կարգ մը համայնքներ մօտէն չեն հետե-
ւած Թմմական 'Կանոնադրութեան յօդուածներուն, եւ պահուսուոր տեղեկու-
թիւններ զրկան են Առաջնորդարան: Իստախ, այսմէն կ'ազգարարենք որ յա-
ռաջիկային կարելուրութեամբ 'նկատի պիտի առնենք զարժադրութիւնը 'Կանոնադ-
րութեան արամադրութեանց:

Հանեցէք անձրով Առաջնորդարան զրկեն 'նորընտիր Միակեան անդամոց ա-
նունը, հուսցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Միակեան Խորհուրդի 'նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ա. Եկեղեցւոյդ եւ ի Հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրով ողջունելու

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Ազաջնորդ

Տիարք՝ ձորն Գրիգորեան
Հէրրի Գասպարեան
Աւետիս Տէրտէրեան
Վազգէն Կոստանեան

Թիւ 15146
Սեպտեմբեր 28, 1966

Արժանաշնորհ
Տ. Վարդան ԱՆՆՅ. Տ. Ասատուրեան
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
եւ Նախագահ Միական Խորհուրդի
Հէյվըրհիւ.

Սիրելի Տէր Վարդան,

Ուրբաթ, Հոկտեմբեր 7, 1966, մենք, ԹԻ ՏՊԼՈՒ ԷՅ 468 Թռիչքով
Նիւ Եորքէն կը մեկնինք կէսօրէ ետք ժամը 12.20ին եւ Պոստոն կը ժա-
մանենք ժամը 1ին:

Կը փափայինք որ հետեւեալ կարգադրութիւնները ընէք մեր այցե-
լութեան առթիւ.-

1. Հանդիպում Հովիւի եւ Միական Խորհուրդի հետ ժամը 6.30ին,
էնր յարմար դատած վայրին մէջ:
2. "Հրաշափառ"ով մուտք եկեղեցին ժամը 7.30ին: Այս մասին
տեղեակ պահել դպրաց դասը:
3. Հանդիպում Միական Խորհուրդի եւ եկեղեցւոյը բոլոր կազմակեր-
պութիւններու վարչական մարմիններուն հետ: Կրնան ներկայ ըլ-
լալ նաեւ համայնքիը բոլոր անդամները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 20317
Մարտ 5, 1968

Արժօնաշնորհ
Տ. Միգայէլ ԶԳՆՅ. Գուլթերո
Հոգևոր Հովիւ Ս. Գրիգոր Լուս. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Միսկան Խորհուրդի
Հէյվերհիւ.

Սիրելի Տէր Միգայէլ.

Տեղեակ էք Տ. Վարդան ԶԳՆՅ. Ս. Աստուծոյնի երկու շարքի արձա-
կուրդ առած շՐԼԼաւու հարցին, երբ տակաւին հովիւ էր Հէյվերհիւի Ս.
Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ:

Փետրուար 28 թուակիր նամակով Տ. Վարդան կը յայտնէ թէ Միսկան
Խորհուրդը տրամադիր է արձակուրդին փոխարէն նիւթական յատկացում մը
կատարել: Գնահատելի կը գտնենք Միսկան Խորհուրդիդ այս տրամադրութիւնը
եւ կը յուսանք որ քարի կամեցողութեամբ ընթացք կու տայ Տէր Հօր եւս
ականկալութեան: Աստուհ ենք թէ Միսկան Խորհուրդիդ այս քարի ժեստը նիւ-
թական մեծ օանրութիւն մը պիտի շՐԼԼայ համայնքիդ վրայ:

Հաճեցէք մեզի հաղորդել Ձեր վերջնական կարգադրութեան մասին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 19087
Յուլիս 10, 1967

Մեծաշարժ
Տիար Յարութիւն Գասպարեան
Ատենապետ Միսական Խորհուրդի
Սր. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Հէյվըրհիւ.

Սիրելի Պրն. Գասպարեան,

Յուլիս 15, 1967 թուակիր մեր նամակով Միսական Խորհուրդիդ
յայտնած էինք նիւ Պրիթընի Սր. Յարութիւն Եկեղեցւոյ հոգեւոր
հովիւ Տ. Միքայէլ ԲՀՆՅ. Պութերոյի հովուական ծառայութեան հա-
մար այլուր փոխադրուելու փափաքը, եւ յանձնարարած էինք որ յար-
մար առիթով մը տեսակցութիւն մը ունենայիք Տէր Հօր հետ, երկուս-
տէք հասկացողութեան մը զալու համար:

Տ. Միքայէլ ԲՀՆՅ. Պութերո մեզի հաղորդած է Ձեզի հետ ունե-
ցած տեսակցութեան արդիւնքը: Հաճեցէք փութով մեզի հաղորդել իրեն
հետ ունեցած Ձեր համաձայնութեան պայմանները:

Տէր Հայրը կրնայ Հէյվըրհիւ փոխադրուել յառաջիկայ Օգոստոս
14-17ի միջոցին: Աւելորդ չըլլար ըսել թէ Միսական Խորհուրդը պէտք
է հոգայ անոր եւ ընտանեկան պարագաներուն Հէյվըրհիւ փոխադրու-
թեան ծախքերը:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍՏՈՍՈՍ
Առաջնորդ

Քիւ 19042
Յունիս 15, 1967

Արժանաշնորհ
Տ. Վարդան ՔՏՆՅ. Տ. Ասատուրեան
Հոգեւոր Հովիւ Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
եւ նախնական Միական Ծորհուրդի
Հէյվըրհիւ.

Սիրելի Տէր Վարդան.

Անցեալ շաբաթավերջին առիթ ունեցանք տեսակցելու Նիւ Գրիթընի
Սբ. Յարութիւն Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Տ. Միքայէլ ՔՏՆՅ. Դուրեմ-
բոյի Հետ, որ փախած յայտնեց այլուք փոխադրուիլ Հովուական Ծառայու-
թեան համար:

Իրեն թելադրեցինք ի նկատի ունենալ Հէյվըրհիւի Սբ. Գրիգոր
Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հովուութիւնը:

Կը յանձնարարենք որ Միական Ծորհուրդը յարմար առիթով տեսակ-
ցութիւն մը կարգադրէ Տ. Միքայէլ ՔՏՆՅ. Դուրեմբոյի Հետ, երկուստեք
հասկացողութեան մը գալու եւ ըստ այնմ մեզ հաղորդելու համար:

Սիրոյ ոգշուներ

Թորոնթ Երիտիկոս
Առաջնորդ

Թիւ 19043
Յունիս 15, 1967

Արժանաշնորհ
Տ. Միրայեւ ԶՀՆՅ. Պուլթերօ
Հոգեւոր Հովիւ Սբ. Յարութիւն Եկեղեցւոյ
Նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Միրայեւ.

Կը ներկայենք օրինակը այն նամակին, զոր ուղղած ենք Հէյվըր-
Հիլի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Միական խորհուրդին, մեզի
հետ տեսակցելու համար, հովուական կարգադրութեան մասին:

Կը սպասենք մեր տեսակցութեան արդիւնքին:

Շնորհակալութեամբ ստացանք մեր երէցկան շրջանի կտրօնները
"Նիւ Պրիթըն Հէրալտ" թերթէն առնուած:

Սիրալիք ողջոյններ մեր ընտանեկան պարագաներուն եւ բարեկամ-
ներուն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Քիւ 21402
Նոյեմբեր 18, 1968

Արժանաշնորհ
Տ. Միրայէլ ԲՅՆՅ. Գուլթերո
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուս. Հայց. Եկեղեցւոյ
Հէյվորհիւ.

Միրելի Տէր Հայր,

Մեզ համար հաճոյք էր Ձեր ծուխի, Լովելի եւ Լորէնսի ժողովուրդը
որպէս ուխտաւոր ընդունիլ Սուրբ Կարգան Մայր Տաճարի մէջ անցեալ
ամսու 20ին: Այլ յուսանք այդ ուխտագնացութիւնը հոգեպէս միեիթարեց
բոլոր ուխտաւորները:

Այս առթիւ ընդունեցէք մեր խորին շնորհակալութիւնը, նոյն օրը
Մայր Տաճարի մէջ երեք եկեղեցիներու անունով հաւարուած գումարը--
101.78 տոլար--Մայր Տաճարին նուիրուելուն համար: Երեք եկեղեցիներու
անունով կը ջանանք Մայր Տաճարին մէջ օգտակար բան մը դնել ի
յիշտակ:

Միրոյ ողջունիւ

ՋԱԶԳԷՆ ԵՊՍ. ԿԸԳՐԸՍԼԵԱՆ
Առաջնորդի Փոխանորդ

Քիւ 28056
Յունիս 29, 1971

Արժանաշնորհ
Տ. Միքայէլ Բհնյ. Պուլերո
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
եւ Մախազան Ժիական Խորհուրդի
Հէյվըրհիւ.

Սիրելի Տէր Միքայէլ,

Ժամանակին ստացանք Ձեր նամակը որով կը խնդրէիք փոխադրուիլ
Հէյվըրհիւի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հովուական Ձեր
պաշտօնէն, մեր թեմի ուրիշ մէկ համայնքին մէջ ծառայելու համար:

Այսու կը յայտնենք թէ նկատի առած ենք Ձեր խնդրանքը, զոր Ապրիլ 1
18ին Ժիական Խորհուրդին հետ մեր ունեցած խորհրդակցութեան ընթացքին
եւս յիշեցինք: Մօտիկ ապագային Ձեզի պիտի իմացնենք մեր կատարելիք
նոր նշանակումները թէ Ձեր մասին եւ թէ Հէյվըրհիւի մեր համայնքին
կապակցութեամբ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 23105
Օգոստոս 31, 1971

Արժանաշնորհ
Տ. Միրայէլ Չհնյ. Գուլբերո
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Նախագահ Ժառանգորդի
Հէյվըրհիլ.

Սիրելի Տէր Միրայէլ,

Այսու գիրով կը յայտնենք Ձեզ որ կարգադրութիւն կատարած ենք եւ
Ձեզ հոգեւոր հովիւ կը նշանակենք Նորթ Ֆիլաձելֆիոյ Ս. Մրրորդութիւն
Հայց. Եկեղեցւոյ, Սեպտեմբեր 15, 1971 թուականէն սկսեալ:

Ներքեակ Ձեզ կը դրկենք օրինակը մեր նամակին զոր ուղղած ենք Լորէն-
սի եւ Լովելի մեր հոգեւոր հովիւներուն, որոնց հետ կը թելադրենք որ
հաղորդակցիք նշանակելու համար իրենց եւ Ձեզի յարմար թուականներ Ս.
Պատարագի մատուցում ունենալու համար Հէյվըրհիլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Եկեղեցւոյ մէջ:

Կը յուսանք մօտիկ ապագային պիտի կարենանք հոգեւոր հովիւ մը նշա-
նակել Հէյվըրհիլի մեր համայնքին համար:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՆԳՐԵՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Recoiled
Recorder Oton Skin

Թիւ 28159
Հոկտեմբեր 14, 1971

Մեծայարգ
Տիար Հերրի Գասպարեան
Ատենապետ Ժիական Խորհուրդի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Հէյվըրհիլ.

Սիրելի Գրն. Գասպարեան,

Հէյվըրհիլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մեր համայնքին համար
հոգեւոր հովիւ կը նշանակենք Տ. Ներսէս Զհնյ. Բարուրեանը որ ներկայիս
կը վարէ Նիակարա ֆոլզ Նիւ Եորք, եւ Սէյնթ Զէթրինզ Գանատա, մեր եր-
կու համայնքներու հովուութիւնը:

Տ. Ներսէս Զհնյ. Բարուրեան Հէյվըրհիլ պիտի փոխադրուի 1971 Նոյեմ-
բեր 9ին:

Ժիական Խորհուրդը պիտի հոգայ հոգեւոր հովիւին հետեւեալ կարիքը--

1. Նիակարա ֆոլզէն դէպի Հէյվըրհիլ իր գոյքերուն փոխադրութեան
ծախքը:
2. Հովուատան մէջ ընտանիքին բնակութիւնը եւ եռլէնթը ծախքերը:
(Տուներն հեռախօսին եւ ընտանիքին կողմէ կատարուած ծախքը Տէր
Հայրը պիտի վճարէ:)
3. Հոգեւորականաց խմբական ապահովագրութեան փրիմիումին կէսը Ժիա-
կան Խորհուրդը պիտի վճարէ եւ կէսը Հովիւը:
4. Հովիւը իր անձնական ինքնաշարժը պիտի գործածէ Ժիական գործին հա-
մար եւ Ժիական Խորհուրդը հովիւի ինքնաշարժին վրայ ապահովագրութիւն
պէտք է առնէ, վճարելով մօտաւորապէս 100-150 տուարի փրիմիում:
5. Ինքնաշարժի կազին համար Ժիական Խորհուրդը պիտի վճարէ շաքաթական
հինգ տուար:
6. Հովիւին շաքաթական թոշակը պէտք է ըլլայ նուազագոյն 100 (հարիւր)
տուար:
7. Տ. Ներսէս Զհնյ. Բարուրեանին հաղորդած ենք իր փոխադրութեան մասին:
Ստորեւ կը գրենք իրեն հասցէն եւ հեռաձայնի թիւը: Համեցէք վերջնական
կարգադրութեան համար հաղորդակցիլ իրեն հետ:

Rev. Nerses Baboorian
300 Ninth Street
Niagara Falls, N.Y. 14303

Ֆել; (716) 282-7303

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՂԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Քիւ 24469

Փետրուար 20, 1975

Մեծայարգ
Տիար Հարրի Գասպարեան
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Եփական Խորհուրդի Ատենապետ
Հէյվըրհիլ, Մասս.

Յարգելի Տիար Հ. Գասպարեան,

Ստացած ենք Յունուար 30, 1975 թուակիր տեղեկագիրը, որով կը հաղորդուի թէ Յունուար 26ին գումարուած համայնքիդ Եփական ժողովին մէջ կատարուած է Եփական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացուելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրուի ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ համայնքիդ Եփական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Եփական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել Եփական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Եփական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ

Առաջնորդ

Մելվին Մինասեան
Ճէյմս Տէրաէրեան կրասեր
Ռիչըրտ Սրազեան
Օսնիկ Եփրունեան
Ռիչըրտ Գազարեան

Թիւ 24664
Հոկտեմբեր 28, 1975

Արժանաշնորհ
Տ. Դերենիկ Քհնյ. Գոնարալեան
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Նախագահ Երեւան Խորհուրդի
Հէյվըրհիւ.

Սիրելի Տէր Դերենիկ,

Սրաի անհուն զոհունակութեամբ կ'ողջունենք Հէյվըրհիւի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ օծման 10-ամեակը, որուն պաշտօնական նշումն ու հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Նոյեմբեր ամսու մէջ:

Մեզի համար, որպէս Առաջնորդ եւ Հայց. Եկեղեցւոյ սպասաւոր, ուրախութիւն է նաեւ հաստատել որ նման տօնախմբութիւններով մեր եկեղեցւոյ հաւատացեալներուն մօտ աւելի եւս կը շեշտուին Հայց. Եկեղեցւոյ առաքելութեան եւ ստանձնած նուիրական պարտականութեանց իմաստը:

Վստահ ենք որ անցնող տասը տարիները զօրացուցին եւ զինեցին Հէյվըրհիւի մեր համայնքը հոգեւոր կեանքի փորձառութիւններով, դիմագրաւելու համար որեւէ դժուարութիւն, եւ առաւել ամեցնելու համար ապագան մեր զաւակներուն հոգեւոր, մշակութային եւ ընկերային կեանքին:

Տասը տարին զանցառելի թիւ մըն է մեր Մայր Եկեղեցւոյ դարաւոր պատմութեան մէջ, սակայն այդ տասը տարիները կուտակուելով եւ իրարու շղթայուելով կը մոխացնեն ու կը զօրացնեն մեր Սուրբ Եկեղեցւոյ կեանքը, եւ անոր կու տան աւելի ուժականութիւն եւ յաւիտենականութիւն:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին իր զոյութեան ընթացքին Հէյվըրհիւի մեր հաւատացեալներուն համար եղած է այն հոգեւոր տունը՝ ուրկէ անոնք ստացած են իրենց հոգին ազնուացնող եւ կեանքին նպասակ մը տուող կենսահիւթը: Այս ուրախ առթիւ, մեր ջերմ մաղթանքն է որ ան շարունակէ իր ստանձնած առաքելութիւնը անվտանգ, եւ իր շուրջ աւելի թիւով հաւատացեալներ համախմբելով անոնց ջամբէ քրիստոսավայել կեանքի սկզբունքները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 24664
Հոկտեմբեր 28, 1975

Արժանաշնորհ
Տ. Գերենիկ ԲՏՆյ. Գոնարալեան
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Նախագահ Երեւան Խորհուրդի
Հէյվըրհիւ.

Սիրելի Տէր Գերենիկ,

Սրտի անհուն զոհունակաթիւնով կ'ողջունենք Հէյվըրհիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ օգման 10-ամեակը, որուն պաշտօնական նշումն ու հանդիսութիւնը անդի պիտի ունենայ նոյեմբեր ամսու մէջ:

Մեզի համար, որպէս Առաջնորդ եւ Հայց. Եկեղեցւոյ սպասաւոր, ուրախութիւն է նաեւ հաստատել որ նման օծնախմբութիւններով մեր Եկեղեցւոյ հաւատացեալներուն մօտ աւելի եւս կը շեշտուին Հայց. Եկեղեցւոյ առաքելութեան եւ ստանձնած նուիրական պարտականութեանց իմաստը:

Վստահ ենք որ անցնող տասը տարիները զօրացուցին եւ զինեցին Հէյվըրհիւի մեր համայնքը հոգեւոր կեանքի փորձառութիւններով, դիմագրաւելու համար որեւէ դժուարութիւն, եւ առաւել ամեցնելու համար ապագան մեր զաւակներուն հոգեւոր, մշակութային եւ ընկերային կեանքին:

Տասը տարին զանցառելի թիւ մըն է մեր Մայր Եկեղեցւոյ դարաւոր պատմութեան մէջ, սակայն այդ տասը տարիները կուտակուելով եւ իրարու շղթայուելով կը մոխացնեն ու կը զօրացնեն մեր Սուրբ Եկեղեցւոյ կեանքը, եւ անոր կու տան աւելի ուժականութիւն եւ յաւիտենականութիւն:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին իր գոյութեան ընթացքին Հէյվըրհիւի մեր հաւատացեալներուն համար եղած է այն հոգեւոր տունը՝ ուրկէ անոնք ստացած են իրենց հոգին ազնուացնող եւ կեանքին նպասակ մը տուող կենսահիւթը: Այս ուրախ առթիւ, մեր ջերմ մաղթանքն է որ ան շարունակէ իր ստանձնած առաքելութիւնը անվտանգ, եւ իր շուրջ աւելի թիւով հաւատացեալներ համախմբելով անոնց ջամբէ քրիստոսավայել կեանքի սկզբունքները:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՇԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ